



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄՈՎԱԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 27524/09)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՄԲՈՒՐԳ

16 նոյեմբերի 2017թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos]՝ *Նախագահ,*

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Թիմ Այքը [Tim Eicke],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ *դատավորներ,*

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2017 թվականի հոկտեմբերի 10-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Ալբերտ
Մովսիսյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝
2009 թվականի ապրիլի 22-ին Դատարան ներկայացված գանգատի
(թիվ 27524/09) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան
պրն Մ. Մանուկյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ իշխանության մարմիններն արդյունավետ քննություն չեն իրականացրել իր դատեր մահվան առնչությամբ:

4. 2011 թվականի հունիսի 21-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն:

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1948 թվականին եւ ապրում է Երեւանում:

6. Դիմումատուն ունեցել է դուստր՝ Կ.Մ.-ն, որը ծնվել է 1985 թվականի նոյեմբերի 19-ին:

7. 2007 թվականի սեպտեմբերի 7-ին ժամը 22:00-ին Կ.Մ.-ն, որն այդ ժամանակ գտնվել է հղիության վաղ փուլում, իր ծնողների եւ ամուսնու հետ տանը եղած ժամանակ կորցրել է գիտակցությունը եւ սկսել է ցնցվել: Կանչվել է շտապօգնություն, որը ժամանել է 40-45 րոպե անց:

8. Ժամանելուց հետո շտապօգնության բժիշկը՝ Ա.Գ.-ն, Կ.Մ.-ին հայտնաբերել է գրեթե անգիտակից վիճակում՝ շնչառության խանգարմամբ եւ արյան ցածր ճնշմամբ: Ըստ դիմումատուի՝ այդ պահին բժշկին ասվել է, որ Կ.Մ.-ն հղի է: Ա.Գ.-ն ախտորոշել է ցնցումային համախտանիշ, Կ.Մ.-ին երկու ներարկում է արել՝ մեկը ռելանիումի, մյուսը՝ մագնեզիումի, եւ տեղափոխել նրան հիվանդանոց: Ըստ երեւոյթին, ո՛չ շտապօգնության բժիշկը, ո՛չ բուժքույրը եւ ո՛չ էլ վարորդը չեն օգնել ընտանիքի անդամներին Կ.Մ.-ին շենքի ութերորդ հարկից իջեցնել եւ նրան շտապօգնության մեքենայի մեջ դնել: Ավելին, չնայած Կ.Մ.-ն ներարկումներից հետո գիտակցության չի եկել, Ա.Գ.-ն նախընտրել է հիվանդանոց տանող

ճանապարհին չնստել նրա կողքին եւ փոխարենը նստել է վարորդի խցիկում՝ վարորդի կողքին:

9. Նույն օրը Ա.Գ.-ն եւ բուժքույրը կազմել են շտապօգնության այցի վերաբերյալ արձանագրություն՝ նշելով, որ իրենք ժամանել են շտապօգնության կանչից հետո յոթ րոպե անց եւ կատարել են միայն մեկ՝ ռեկանիումի ներարկում:

10. 2007 թվականի սեպտեմբերի 14-ին Կ.Մ.-ն հիվանդանոցում մահացել է՝ այդպես էլ գիտակցության չգալով:

11. Նույն օրը Երեւանի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունը նրա մահվան առնչությամբ հետաքննություն է սկսել եւ նշանակել է դիահերձում, որը եւս կատարվել է նույն օրը: Դրա եզրակացության (դատաբժշկական եզրակացություն թիվ 728) համաձայն՝ Կ.Մ.-ն մահացել է օրգանիզմի ընդհանուր թունավորումից, որն առաջացել է գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների խանգարման հետեւանքով, ինչն էլ իր հերթին առաջացել է նյարդային անոթների տարածուն եւ ցրված թրոմբոզի հետեւանքով:

12. Հետաքննության ընթացքում քննիչը ցուցմունք է վերցրել Կ.Մ.-ին բժշկական օգնություն ցուցաբերած բուժանձնակազմից, այդ թվում՝ Ա.Գ.-ից, բուժքրոջից եւ վարորդից: Մասնավորապես, 2007 թվականի նոյեմբերի 14-ի իր ցուցմունքում բուժքույրը նշել է, որ բժիշկն իրեն հանձնարարել է կատարել մագնեզիումի սուլֆատի ներարկում, որպեսզի Կ.Մ.-ի ցնցումները դադարեն, ինչից հետո բժիշկն իրեն տվել է սրվակով ռեկանիում, որն ինքը ներարկել է: Նույն օրը տրված իր ցուցմունքում Ա.Գ.-ն բացատրություն է տվել այն մասին, որ երբ իրենք ժամանել են, Կ.Մ.-ն ջղակծկումների մեջ է եղել, եւ նրա ընտանիքի անդամների հետ զրուցելիս իրեն պարզ է դարձել, որ Կ.Մ.-ն հղի է: Այնուհետեւ, ինքը բուժքրոջը հանձնարարել է ներարկել ռեկանիում եւ, իմանալով, որ Կ.Մ.-ն հղի է, որեւէ այլ դեղամիջոց չի ներարկել եւ որեւէ այլ միջոց չի ձեռնարկել, քանի որ տվյալ հանգամանքում անհրաժեշտ չի համարել:

13. 2007 թվականի նոյեմբերի 26-ին շտապօգնության բուժքույրը եւ Ա.Գ.-ն նորից հարցաքննվել են: Բուժքույրը նշել է, մասնավորապես, որ այն փաստը, որ շտապօգնության այցի վերաբերյալ արձանագրության մեջ նշված է եղել միայն ռեկանիումի եւ ոչ թե մագնեզիումի ներարկումը, հավանաբար կարող է բացատրվել նրանով, որ ինքը մոռացել է բժշկին հիշեցնել մագնեզիումի ներարկման մասին: Ա.Գ.-ն, *inter alia* (*ի թիվս այլնի*), նշել է, որ ինքը բուժքրոջը հանձնարարել է կատարել երկու ներարկում:

14. Հետաքննության ընթացքում քննիչը նշանակել է փորձագետների հանձնաժողովի կողմից կատարվող դատաբժշկական փորձաքննություն: 2008 թվականի հունվարի 14-ին արված եզրակացության (դատաբժշկական եզրակացություն թիվ 89) արդյունքների համաձայն՝ շտապօգնության բրիգադի կողմից արված 2 միլիգրամ ռեկանիումի եւ 3 գրամ մագնեզիումի ներարկումը տվյալ պահին եղել է ճիշտ՝ հաշվի առնելով հիվանդի վիճակը, այն է՝ ցնցումային համախտանիշը, իսկ այդ նյութերի տվյալ քանակով ներարկումը հակացուցված չի եղել: Եզրակացության մեջ նաեւ նշվել է, որ Կ.Մ.-ին ցուցաբերած բժշկական օգնությունը ճիշտ է եղել եւ համապատասխանել է ախտորոշմանը:

15. 2008 թվականի փետրվարի 27-ին քննիչը որոշել է մերժել քրեական վարույթի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառով:

16. 2008 թվականի փետրվարի 29-ին դիմումատուն դիմում է ներկայացրել Երեւանի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազություն՝ պահանջելով կատարել նոր դատաբժշկական փորձաքննություն, որին կթույլատրեն նրան մասնակցել: Մասնավորապես, նա պնդել է, որ իր դուստրը մահացել է Ա.Գ.-ի անփութության պատճառով, որը նրան քիմիական նյութերի երկու ներարկում է արել, որոնց օգտագործումը հակացուցված է եղել՝ հաշվի առնելով Կ.Մ.-ի հղիությունը, շնչառության խանգարումը եւ արյան ցածր ճնշումը: Այս առնչությամբ դիմումատուն հղում է կատարել ռեկանիում ու մագնեզիում օգտագործելու բժշկական ցուցումներին եւ բժշկական գրականությունից քաղվածքներին, որոնց պատճենները նա կցել է իր դիմումին: Դիմումատուն նաեւ

պնդել է, որ շտապօգնության մեքենան ժամանել է ուշացումով, դրանում բացակայել են առաջին անհրաժեշտության բժշկական սարքավորումներ, ինչպես օրինակ՝ թթվածնային բալոն, եւ որ շտապօգնության բրիգադն ընդհանուր առմամբ չի գործել պատշաճ ջանասիրությամբ:

17. 2008 թվականի մարտի 3-ին Վարչական շրջանի դատախազությունը որոշել է վերացնել 2008 թվականի փետրվարի 27-ի որոշումը եւ լրացուցիչ քննություն կատարելու համար գործը վերադարձրել է քննիչին: Մասնավորապես, որոշման մեջ նշվել է, որ դիմումատուի՝ իր մասնակցությամբ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն իրականացնելու մասին պահանջը եղել է հիմնավորված:

18. 2008 թվականի մարտի 5-ին քննիչը նշանակել է լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն փորձագետների հանձնաժողովի կողմից, որից պահանջվել է որոշել հետեւյալը.

«1. Կ.Մ.-ի մահվան պատճառը. արդյոք ծնված օրվանից նա տառապել է որեւէ հիվանդությամբ ... արդյոք հիվանդությունը, որով նա տառապել է ծնված օրվանից, կարող էր նրա մահվան պատճառը լինել կամ որեւէ այլ ձեռով պատճառահետեւանքային կապ ունենալ նրա մահվան հետ:

2. Արդյոք շտապօգնության բրիգադի կողմից կատարված 2 միլիգրամ ռելանիումի եւ 3 գրամ մագնեզիումի ներարկումը ճիշտ է եղել, արդյոք դրա քանակը թույլատրելի սահմանում է եղել, եւ արդյոք ներարկված մագնեզիումը կարող էր բացասական հետեւանքներ առաջացնել:

3. Արդյոք եղել է որեւէ դեղամիջոց (բժշկական տեսության, գիտության մեջ) կամ որեւէ բժշկական մոտեցում, որի կիրառումը կարող էր բարելավել Կ.Մ.-ի վիճակը, եւ արդյոք այն պետք է կիրառվեր շտապօգնության բրիգադի կողմից կամ հիվանդանոցում: Արդյոք բժշկական օգնությունը եղել է պատշաճ եւ բավարար, կամ արդյոք եղել են բացթողումներ, եւ եթե այո, ապա ովքե՞ր են դրանց համար պատասխանատու եղել:

4. Կ.Մ.-ին հիվանդանոց տեղափոխելը տեսել է մոտավորապես 40 րոպե. արդյոք ավելի արագ հիվանդանոց տեղափոխելու դեպքում հնարավոր կլիներ փրկել Կ.Մ.-ին:

5. Արդյոք Կ.Մ.-ի հինգշաբաթյա հղիությունը նպաստել է նրա հիվանդության արտահայտմանը եւ զարգացմանը, արդյոք հղիության եւ նրա մոտ ախտորոշված հիվանդության միջեւ անմիջական պատճառահետեւանքային կապ է եղել:

6. Կ.Մ.-ի բժշկական քարտը ... պարունակել է նշումներ բժշկական օգնության, ներարկումների եւ դեղամիջոցների, ինչպես նաեւ յոթ օրվա ընթացքում նրան բուժող բժիշկների վերաբերյալ: Արդյոք ցուցաբերված բժշկական օգնությունը եղել է ճիշտ, ներարկված դեղամիջոցների տեսակն ու քանակը՝ ճիշտ ընտրված, եւ արդյոք դրանք եղել են թույլատրելի, թե՛ ոչ: Եթե ոչ, ապա ո՞ր բժիշկն է պատասխանատու եղել սխալների համար, եւ վերջապես, արդյոք ցուցաբերված բժշկական օգնությունն է հանգեցրել մահվան:

7. Այն գիտական մեթոդները, որոնց վրա հիմնված են եղել փորձագետների հանձնաժողովի թիվ 728 դատաբժշկական եզրակացությունը եւ թիվ 89 դատաբժշկական եզրակացությունը. արդյոք դրանք վերցված են եղել բժշկական գրականությունից, եւ ո՞ր մեթոդներն են կիրառվել նախորդ փորձաքննությունների ընթացքում ...

8. ... կոնկրետ պատճառը (պատճառները) եւ նախապայմանը (նախապայմանները), որոնք հանգեցրել են Կ.Մ.-ի մահվան:»:

19. 2008 թվականի ապրիլի 23-ին փորձագետների հանձնաժողովը կայացրել է իր եզրակացությունը (դատաբժշկական եզրակացություն թիվ 6), որով արված եզրահանգումներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«1 եւ 8. Համաձայն բժշկական փաստաթղթերի՝ չի հայտնաբերվել որեւէ տեղեկություն այն մասին, որ Կ.Մ.-ն ունեցել է որեւէ բնածին հիվանդություն: Կ.Մ.-ն մահացել է օրգանիզմի ընդհանուր թունավորումից, որն առաջացել է գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների խանգարման հետեւանքով, ինչն էլ իր հերթին առաջացել է նյարդային անոթների տարածուն եւ ցրված թրոմբոզի հետեւանքով: Ինչ վերաբերում է ֆունկցիոնալ խանգարումների հանգեցնող առաջնային հիվանդություններին, որոնք կարող էին առաջացնել ցնցումային համախտանիշ, ապա հնարավոր չէր առանց համապատասխան բժշկական փաստաթղթերի որեւէ եզրահանգում անել:

2. Անհետաձգելի բժշկական օգնության մասնագետների կողմից կատարված 2 միլիգրամ ռելանիումի եւ 3 գրամ մագնեզիումի ներարկումը՝ տվյալ պահին ցնցումային համախտանիշի առկայության դեպքում, ճիշտ է եղել: Տվյալ պահին մագնեզիումի ներարկումը չէր կարող որեւէ կերպ բացասական հետեւանքներ առաջացնել:

3. Տվյալ դեպքում շտապօգնության բրիգադի կողմից եւ հիվանդանոցում ցուցաբերված բժշկական օգնությունը եղել է պատշաճ եւ բավարար, առանց բացթողումների, ինչը հիմնավորված է բժշկական փաստաթղթերի տվյալներով եւ գործի նյութերում եղած ապացույցներով:

4. Հիվանդ Կ.Մ.-ն հիվանդանոց է տեղափոխվել կենսական կարեւոր ֆունկցիաների խանգարման նշաններով, եւ ավելի արագ հիվանդանոց տեղափոխելը չէր կարող կանխել նրա մահը:

5. Կ.Մ.-ի հինգշաբաթյա հղիությունը որեւէ պատճառահետեւանքային կապ չի ունեցել նրա մահվան հետ, քանի որ հղիության եւ տվյալ հիվանդության միջեւ անմիջական պատճառահետեւանքային կապ չի եղել:

6. Կ.Մ.-ի բժշկական օգնությունը ... [հիվանդանոցում] (ներարկումներ, դեղամիջոցներ) ցուցաբերվել է ճիշտ ձեով եւ ժամանակին:

7. Կ.Մ.-ի դիակի դատաբժշկական փորձաքննության վերաբերյալ թիվ 728 եզրակացությունը եւ դատաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի կայացրած թիվ 89 եզրակացությունը ճշգրիտ են եւ հիմնավորված. կիրառվել է գիտական մեթոդաբանություն. կատարվել են դիակի օրգանների հյուսվածքաբանական հետազոտություններ, եւ հանձնաժողովի կողմից իրականացվող փորձաքննությանը մասնակցել են Առողջապահության նախարարության առաջատար մասնագետներ:»:

20. 2008 թվականի ապրիլի 25-ին քննիչը որոշել է մերժել քրեական վարույթի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառով: Որոշման մեջ, մասնավորապես, նշվել է, որ հարցաքննվել են բուժանձնակազմի համապատասխան անդամները, այդ թվում՝ անհետաձգելի բժշկական օգնության այն մասնագետները, որոնք Կ.Մ.-ին առաջին բժշկական օգնություն են ցուցաբերել: Այնուհետեւ, որոշման մեջ վերահաստատվել են թիվ 89 եւ թիվ 6 դատաբժշկական եզրակացություններում արտացոլված եզրահանգումները, եւ նշվել է, որ որպես առաջին օգնություն՝ Կ.Մ.-ին ցուցաբերված սկզբնական բժշկական օգնությունը եւ հետագա հիվանդանոցային բուժումը կատարվել են պատշաճ եւ համապատասխան ձեով ու ժամանակին, առանց որեւէ սխալի կամ բացթողման:

21. Նույն օրը քննիչը դիմել է Երեւանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության (Շտապբուժօգնություն) տնօրենին՝ շտապօգնության բրիգադի նկատմամբ պատասխանատվության համապատասխան միջոց կիրառելու պահանջով: Մասնավորապես, քննիչը նշել է, որ շտապօգնության մեքենան ժամանել է 40 րոպե ուշացմամբ, եւ շտապօգնության բժիշկը այցի վերաբերյալ արձանագրության մեջ նշել է Կ.Մ.-ին արված երկու ներարկումներից միայն մեկը: Ավելին, հիվանդին հիվանդանոց տանելու գործընթացը եղել է շատ դանդաղ եւ անկազմակերպ: Շտապօգնության մեքենայի վարորդը չի իջեցրել հիվանդին եւ չի օգնել նրան շտապօգնության մեքենայի մեջ դնելու հարցում: Ծայրահեղ կրիտիկական վիճակում գտնվող Կ.Մ.-ի կողքին նստելու փոխարեն՝ բժիշկը նախընտրել է նստել վարորդի խցիկում՝ վարորդի կողքին: Այսպիսով, քննիչը հանգել է այն եզրակացության, որ շտապօգնության մեքենան ժամանել է զգալի ուշացմամբ, եւ պատշաճ բժշկական օգնություն չի ցուցաբերվել:

22. 2008 թվականի ապրիլի 30-ին դիմումատուն քննիչի 2008 թվականի ապրիլի 25-ի որոշման առնչությամբ բողոք է ներկայացրել Երեւանի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատարան՝ պահանջելով Ա.Գ.-ի եւ բուժքրոջ դեմ քրեական վարույթ հարուցել: Դիմումատուն նշել է, մասնավորապես, որ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն իրականացնող փորձագետների հանձնաժողովը պատշաճ ուշադրություն չի դարձրել իր այն փաստարկներին, որոնք հիմնված են եղել համապատասխան բժշկական գրականության եւ Կառավարության որոշումների վրա: Նա պնդել է հղիության եւ արյան ցածր ճնշման դեպքում ռելանիում եւ մագնեզիում ներարկելու հակացուցման առնչությամբ իր փաստարկները, ինչպես նաեւ Վարչական շրջանի դատախազություն բերված իր նախկին բողոքում ներկայացված մյուս փաստարկները:

23. 2008 թվականի մայիսի 16-ին Շտապ բժշկական օգնության ծառայության բժշկական խորհուրդը հանդիպում է ունեցել, որի ընթացքում

քննարկվել են քննիչի 2008 թվականի ապրիլի 25-ի որոշման մեջ նկարագրված հանգամանքները: Ինչպես պարզվում է, շտապօգնության բրիգադի անդամները, 2007 թվականի սեպտեմբերի 7-ին կատարված իրադարձությունների հետ կապված, գրավոր բացատրություններ են ներկայացրել: Արդյունքում, աշխատանքային կանոնակարգերը եւ բժշկական էթիկան լրջորեն խախտելու համար Ա.Գ.-ն ստացել է նկատողություն: Ավելին, շտապ բժշկական օգնության համապատասխան բաժնի ղեկավարին հանձնարարվել է ընդլայնել աշխատանքային կանոնակարգերին հետելելու մասով աշխատողների նկատմամբ վերահսկողությունն այնպես, որ ապագայում կանխվեն նմանատիպ դրսեւորումները, ինչպես նաեւ ուսումնասիրել յուրաքանչյուր այդպիսի դեպք:

24. 2008 թվականի մայիսի 26-ին Երեւանի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատարանը մերժել է դիմումատուի բողոքը՝ գտնելով, որ Կ.Մ.-ի մահվան առնչությամբ իրականացված քննությունը եղել է պատշաճ եւ բավարար: Այդպիսով, Վարչական շրջանի դատարանը անդրադարձել է վերջին դատաբժշկական եզրակացության արդյունքներին: Ինչ վերաբերում է շտապօգնության մեքենայի ուշ ժամանելուն, այցի վերաբերյալ արձանագրության սխալ լրացմանը եւ այն փաստին, որ դեպի հիվանդանոց տանող ճանապարհին բժիշկը չի նստել հիվանդի կողքին, ապա Վարչական շրջանի դատարանը անդրադարձել է այն փաստին, որ Ա.Գ.-ն նկատողություն է ստացել իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար:

25. 2008 թվականի հուլիսի 16-ին դիմումատուն սույն որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Վերաքննիչ քրեական դատարան: Նա պնդել է, մասնավորապես, որ Վարչական շրջանի դատարանը չի հարցաքննել Ա.Գ.-ին եւ բուժքրոջը: Ավելին, Վարչական շրջանի դատարանը պատշաճ ձեւով չի ուսումնասիրել Կ.Մ.-ին արված ներարկումների վերաբերյալ նրանց առարկություններն այն հիմնավորումներով, որ դրանք նրա վիճակում հակացուցված ներարկումներ են եղել, կամ, ինչպես նա է պնդել, դրանց բարձր դոզավորումը եղել է նրա մահվան պատճառը:

26. 2008 թվականի սեպտեմբերի 4-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը եւ Վարչական շրջանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ: Այդպիսով, այն նշել է, որ դատարանում վկայություն տալու համար Ա.Գ.-ին եւ բուժքրոջը կանչելու որեւէ անհրաժեշտություն չի եղել, քանի որ նրանք հետաքննության ընթացքում արդեն ցուցմունք էին տվել: Ինչ վերաբերում է դիմումատուի՝ Կ.Մ.-ին ներարկված դեղամիջոցների հակացուցված լինելու վերաբերյալ առարկություններին, ապա Վերաքննիչ դատարանը հիմնվել է դատաբժշկական եզրակացությունների վրա, որոնց համաձայն, դրանց ներարկումը եղել է ճիշտ՝ հաշվի առնելով տվյալ պահին ախտորոշված ցնցումային համախտանիշը:

27. 2008 թվականի սեպտեմբերի 30-ին դիմումատուն Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

28. 2008 թվականի հոկտեմբերի 30-ին Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության, քանի որ այն չի ներկայացվել Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի կողմից, ինչպես պահանջվում է Քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով: Դիմումատուն պնդում է, որ ինքը հնարավորություն չի ունեցել օգտվելու այդպիսի փաստաբանի վճարովի ծառայություններից:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական օրենսգիրք (տվյալ ժամանակահատվածում գործող)

29. 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետեւանքով, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ, պատժվում է

ազատագրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Բ. Քրեական դատավարության օրենսգիրք
(տվյալ ժամանակահատվածում գործող)**

30. 10-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից:

31. Օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց եւ հանցագործության, ինչպես նաեւ դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

32. 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Դատարանն այս դեպքում իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը եւ սկսելու տվյալ դրույթի սահմանադրականությունն ստուգելու գործընթացը:

33. 68-րդ հոդվածով նախատեսվում է, որ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը: 69-րդ հոդվածում թվարկվում են քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցության պարտադիր լինելու դեպքերը, ինչն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: 70-րդ

հողվածով նախատեսվում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը Փաստաբանների պալատից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան՝ ա) կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ, կամ բ) այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:

34. 180-րդ հողվածի 1-ին մասով նախատեսվում է, որ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն եւ լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը եւ հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաեւ կարող է կատարվել դեպքի վայրի զննություն եւ նշանակվել փորձաքննություն (180-րդ հողվածի 2-րդ մաս):

35. Օրենսգրքի 185-րդ հողվածի 1-ին մասով նախատեսվում է, որ քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

36. 290-րդ հողվածի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 5-րդ կետերի համաձայն՝ այն անձինք, որոնց իրավունքները եւ ազատությունները խախտվել են քրեական վարույթի հարուցումը մերժելու կամ քրեական վարույթը դադարեցնելու մասին որոշմամբ, եւ որոնց՝ այդ որոշումների դեմ ներկայացված բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից, իրավունք ունեն դրանց դեմ բողոք ներկայացնելու դատարան: Այդպիսի բողոքները պետք է, բողոքը մերժելու մասին ծանուցումն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, ներկայացվեն վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան: Եթե դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավորված է, այն պետք է հանձնարարի վարույթն իրականացնող մարմնին բեկանել անձի իրավունքներն ու ազատությունները խախտող որոշումը: Եթե դատավորը գտնում է, որ բողոքարկված գործողությունները կատարվել են

օրենքին համապատասխան, եւ անձի իրավունքներն ու ազատությունները չեն խախտվել, ապա դատարանը պետք է մերժի բողոքը:

37. Օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսվում է, որ վարույթի կողմերն իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով:

Գ. Քաղաքացիական օրենսգիրք

1. Տվյալ ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթները

38. 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

39. 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաեւ չստացված եկամուտները:

40. 1058-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաեւ իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

41. 1058-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

2. *2014 թվականի մայիսի 19-ի թիվ ՀՕ-21-Ն օրենքով կատարված փոփոխությունները*

42. 2014 թվականի նոյեմբերի 1-ից ի վեր 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ քաղաքացիական վնասի տեսակների ցանկում ներառվել է ոչ նյութական վնասը, որի հատուցումը կարող է պահանջվել քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում: Քաղաքացիական օրենսգիրքը լրացվել է նոր՝ 162.1 եւ 1087.2 հոդվածներով, որոնցով կարգավորվում է ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու կարգը: Մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կատարված հետագա փոփոխությունները (ուժի մեջ է 2016 թվականի հունվարի 1-ից)՝ ոչ նյութական վնասի հատուցում կարող էր պահանջվել, եթե դատական ակտով հաստատվել է, որ անձի՝ Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ եւ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները խախտվել են, ինչպես նաեւ անարդարացի դատապարտման դեպքերում:

Դ. «Սահմանադրական դատարանի մասին» օրենք

43. 2006 թվականի հուլիսի 1-ի օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսվում է, որ Սահմանադրական դատարանի որոշումը պետք է պարունակի որոշման՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելու մասին կամ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին նշումը:

Ե. «Փաստաբանության մասին» օրենք

44. 6-րդ հոդվածով նախատեսվում է, որ փաստաբանն իրավունք ունի փոխհատուցում ստանալու իր ծառայությունների դիմաց: Փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի եւ վստահորդի միջեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական

օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով: Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը քրեական գործերով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ նախատեսված դեպքերում (տե՛ս վերելում՝ 30-րդ եւ 33-րդ պարբերությունները), ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ հետեւյալ դեպքերում. 1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով. եւ 2) առողջությանը վնաս պատճառելու, ինչպես նաեւ կերակրողի մահվան հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով: Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է փաստաբանների պալատը՝ պետության հաշվին: Անվճար իրավաբանական օգնություն կարող է ցույց տրվել նաեւ փաստաբանի նախաձեռնությամբ:

45. 29.1 հոդվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսվում էր, որ հավատարմագիրը փաստաբանին տրամադրվում է օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:

2. Առողջապահության եւ շտապ բժշկական օգնության վերաբերյալ կարգավորումներ

46. 1996 թվականի մարտի 4-ի «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքի (Օրենք) 2-րդ հոդվածով նախատեսվում է բժշկական օգնության եւ սպասարկման երկու տեսակ՝ առաջնային եւ մասնագիտացված: 2-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ առաջնային բժշկական օգնությունը երաշխավորվում է պետության կողմից՝ յուրաքանչյուր մարդու համար անվճար:

47. Օրենքի 6-րդ հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման եւ իրականացման

ընթացքում իր առողջությանը հասցված վնասի դիմաց ստանալ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

48. Անհետաձգելի բժշկական օգնության տրամադրումը տվյալ ժամանակահատվածում կարգավորվում էր Առողջապահության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1529-Ա հրամանով հաստատված՝ Պետության կողմից երաշխավորված անվճար անհետաձգելի բժշկական օգնության կազմակերպման չափորոշիչով: Չափորոշիչում, մասնավորապես, նշվում էր, որ պետությունն ապահովում է պետության կողմից երաշխավորված անվճար անհետաձգելի բժշկական օգնության եւ հիվանդանոցային բժշկական օգնության տրամադրումը երկրի ամբողջ բնակչության համար: Շտապ բժշկական օգնության ծառայության հիմնական խնդիրների մեջ է մտել կանչն ստանալուց երեսուն րոպեի ընթացքում անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելը՝ ինչպես դեպքի վայրում, այնպես էլ հիվանդին հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին, ինչը պետք է կատարվեր հնարավորինս շուտ:

Է. Սահմանադրական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 8-ի որոշումը, *inter alia*, Քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին, որն ընդունվել է մի շարք անձանց կողմից ներկայացված դիմումների հիման վրա

49. Սահմանադրական դատարանը գտել է, որ *inter alia*, Քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը եւ «Փաստաբանության մասին» օրենքի 29.1 հոդվածը հակասում են Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին, քանի որ դրանք անհամաչափորեն սահմանափակել են Վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը՝ բողոք բերած անձի իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունը պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով: Սահմանադրական դատարանը վերացրել է Վճռաբեկ

դատարանում գործելու համար հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը՝ համապատասխան դրույթները հակասահմանադրական համարելով, սակայն այդ դրույթներն ուժը կորցնելու վերջնական ժամկետ է սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը: Այդ պահանջը հստակորեն վերացնող՝ Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունները կատարվել են Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

50. Դիմումատուն բողոք է ներկայացրել, որ իշխանություններն արդյունավետ քննություն չեն իրականացրել իր դստեր մահվան առնչությամբ: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ, 7-րդ, 13-րդ եւ 17-րդ հոդվածների վրա: Դատարանը կարծում է, որ սույն բողոքը պետք է դիտարկել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի շրջանակներում, որի համապատասխան մասը շարադրված է հետեւյալ բովանդակությամբ.

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով...»

Ա. Ընդունելիությունը

1. Կողմերի առարկությունները

51. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի սպառել իր համար հասանելի իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ ինքնուրույն վճռաբեկ բողոք ներկայացնելով անմիջապես Վճռաբեկ դատարան՝

խախտել է ընթացակարգային նորմերը՝ Քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները: Ինչ վերաբերում է դիմումատուի այն պնդումներին, որ ինքը հնարավորություն չի ունեցել օգտվելու Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ծառայություններից, ապա նա ցույց չի տվել, որ երբեւէ դիմել է այդպիսի հավատարմագրված փաստաբանի, կամ որ վճռաբեկ բողոք ներկայացնելու իր դիմումը մերժվել է վճարելու հնարավորություն չունենալու պատճառով: Կառավարությունը նաեւ նշել է, որ դիմումատուն, խնդրանք ներկայացնելու դեպքում, փաստաբանի անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն է ունեցել: Այնուամենայնիվ, դիմումատուն չի ներկայացրել որեւէ ապացույց այն մասին, որ պահանջել է այդպիսի անհատույց իրավաբանական ծառայություններ, եւ որ իր փորձերն անհաջող են անցել:

52. Դիմումատուն առարկություն է ներկայացրել այն մասին, որ հավատարմագրված փաստաբաններն անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու իրավունք են ունեցել, սակայն դա անելու պարտավորություն չեն ունեցել: Նա նաեւ նշել է, որ հաստատված գործելակերպի համաձայն՝ իրավաբանական օգնությունը տրամադրվում էր միայն քաղաքացիական գործերով վարույթների կապակցությամբ՝ ալիմենտի վճարման, առողջությանը վնաս պատճառելու կամ կերակրողին կորցնելու առնչությամբ: Ավելին, իր գործը պարունակել է բարդ հարցեր եւ, հետեւաբար, դատարանում նրան ներկայացնելը կպահանջեր լրացուցիչ իրավաբանական ծախսեր, որոնց համար նա ի վիճակի չէր լինի վճարել:

2. Դատարանի գնահատականը

53. Դատարանը կրկին նշում է, որ դիմումատուները միայն պարտավոր են սպառել իրավական պաշտպանության այն ներպետական միջոցները, որոնք տվյալ ժամանակահատվածում հասանելի են տեսականորեն եւ գործնականում եւ

որոնք նրանց կողմից կարող են անմիջականորեն կիրառվել, այսինքն՝ իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք մատչելի են, իրենց բողոքների մասով փոխհատուցում ստանալու հնարավորություն են տալիս եւ առաջարկում են հաջողության հասնելու ողջամիտ հնարավորություն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Պակսասն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ] [*Paksas v. Lithuania* [GC]], թիվ 34932/04, § 75, ՄԻԵԴ 2011 (քաղվածքներ)):

54. Դատարանը նշում է, որ տվյալ ժամանակահատվածում դիմումատուն իրավունք է ունեցել Վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոք բերելու դատարանում գործելու համար հավատարմագրված փաստաբանի միջոցով միայն: Այնուամենայնիվ, դիմումատուն իր վճռաբեկ բողոքը ներկայացրել է անձամբ՝ պնդելով, որ այդպիսի փաստաբանի ծառայությունների դիմաց վճարելու համար միջոցներ չի ունեցել:

55. Դատարանը նշում է, որ այս հարցը քաղաքացիական գործերի առնչությամբ այն արդեն քննել է եւ գտել է, որ իրավաբանական օգնության համար դիմելու հնարավորության բացակայության դեպքում այն պահանջը, որ վճռաբեկ բողոքը կարող է ներկայացվել Վճռաբեկ դատարանում գործելու համար հավատարմագրված փաստաբանների կողմից, անհամաչափորեն սահմանափակել է դիմումատուի՝ այդ դատարանի մատչելիությունից արդյունավետորեն օգտվելու հնարավորությունը, քանի որ դիմումատուի՝ այդ դատարանի մատչելիությունից օգտվելու հնարավորությունը պայմանավորված է եղել նրա ֆինանսական դրությամբ (տե՛ս *Շամոյանն ընդդեմ Հայաստանի* [*Shamoyan v. Armenia*], թիվ 18499/08, §§ 32-39, 2015 թվականի հուլիսի 7): Սույն գործում դիմումատուն նույն ձեռով պնդել է, որ ինքը հավատարմագրված փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորություն չի ունեցել, եւ Դատարանը որեւէ պատճառ չունի դա կասկածի տակ դնելու համար: Դատարանն այնուհետեւ նշում է, որ թեւեւ սույն գործը չի վերաբերում քաղաքացիական գործի, ինչպես *Շամոյանի* դեպքում, այնուամենայնիվ, դիմումատուն իրավունք չի ունեցել դիմելու իրավաբանական օգնություն

ստանալու համար, այդպիսի հնարավորություն եղել է միայն քրեական գործերով կասկածյալների կամ մեղադրյալների համար (տե՛ս վերելում՝ 30-րդ, 33-րդ եւ 44-րդ պարբերությունները): Կառավարությունը նույնպես չի պնդել, որ դիմումատուն իրավունք է ունեցել օգտվելու իրավաբանական օգնությունից, սակայն պնդել է, որ նա երբեւէ չի փորձել դիմել հավատարմագրված փաստաբանի եւ պահանջել է անհատույց իրավաբանական ծառայություններ: Այնուամենայնիվ, համանման առարկություն արդեն քննվել եւ մերժվել է *Շամոյանի* գործով (տե՛ս *Շամոյանի* գործը՝ վերելում հիշատակված, § 33): Այս գործով, Կառավարությունը նույն ձեւով չի տրամադրել այնպիսի գործերի որեւէ կոնկրետ օրինակ կամ ապացույց, որոնց դեպքում հավատարմագրված փաստաբանները համաձայնել են տրամադրել անհատույց իրավաբանական ծառայություններ այն անձանց, որոնք ցանկացել են վճարել բողոք ներկայացնել: Հետեւաբար, այս առարկությունը ենթադրական բնույթ է կրում եւ պետք է նույն ձեւով մերժվի: Այսպիսով, պարզ է դառնում, որ Վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոք ներկայացնելը տվյալ ժամանակահատվածում իրավական պաշտպանության մատչելի միջոց չի եղել:

56. Դատարանը կարծում է, որ այդպիսի հանգամանքներում հարց է առաջանում, թե արդյոք դիմումատուն պետք է օգտվեր իրավական պաշտպանության տվյալ միջոցից: Այնուամենայնիվ, այս առնչությամբ այն վերահաստատում է իրավական պաշտպանության միջոցները սպառելու կանոնը որոշակի ճկունությամբ եւ առանց ավելորդ ձեւականության կիրառելու անհրաժեշտությունը՝ պատշաճ վերապահում կատարելով այն փաստին, որ այն կիրառվում է մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմի համատեքստում (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Մոկանուն եւ այլք ընդդեմ Ռումինիայի* [ՄԴ] [*Mocanu and Others v. Romania* [GC]], թիվ 10865/09 եւ մյուս 2-ը, § 224, ՄԻԵԴ 2014 (քաղվածքներ)): Դատարանը նշում է, որ դիմումատուի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելուց կարճ ժամանակ հետո Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել այն դրույթը, որով նրանից պահանջվել է օգտվել հավատարմագրված փաստաբանի ծառայություններից,

մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ վերացնելով այդ պահանջը, քանի որ դրանով անհամաչափորեն սահմանափակվում էր Վճռաբեկ դատարանի մատչելիությունը (տե՛ս վերելում՝ 49-րդ պարբերությունը): Ճիշտ է, որ, նույն որոշման համաձայն, 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ուժի մեջ է մնացել եւ, հետեւաբար, կիրառելի է եղել մինչեւ 2008 թվականի դեկտեմբերի 31-ը: Այդուհանդերձ, ներպետական օրենսդրությամբ դատարաններին թույլատրվում էր կասեցնել վարույթը, եթե դրանք գտնում էին, որ կիրառելի դրույթը չի համապատասխանում Սահմանադրությանը (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, թվում է, թե Վճռաբեկ դատարանն այս կանոնը չկիրառելով եւ փոխարենը դիմումատուի վճռաբեկ բողոքի քննությունը մերժելու որոշում կայացնելով, ցուցաբերել է ավելորդ ձեականություն:

57. Այդպիսի հանգամանքներում Դատարանը չի համարում, որ դիմումատուի՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն բողոքը չի համապատասխանում Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետին, եւ որոշում է մերժել Կառավարության առարկությունը:

58. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

59. Դիմումատուն նշել է, որ իշխանություններն արդյունավետ քննություն չեն իրականացրել իր դատեր մահվան առնչությամբ: Նա, մասնավորապես, պնդել է, որ քննություն իրականացնող մարմինը գործի նյութերում չի ընդգրկել,

ինչպես նաև չի ուսումնասիրել իր կողմից ներկայացված ապացույցները: Ավելին, չնայած այն փաստին, որ շտապօգնության բժիշկը եւ բուժքույրը տվել են միմյանց հակասող ցուցմունքներ, քննիչը որոշել է, որ անհրաժեշտ չէ հարուցել քրեական վարույթ՝ հաշվի չառնելով այն ապացույցը, որ բժիշկը կեղծել է փաստաթղթերը: Բացի այդ, շտապօգնության բժիշկը եւ բուժքույրը չեն հարցաքննվել դատարանների կողմից: Վերջում դիմումատուն հայտարարել է, որ պետությունը չի ստեղծել այնպիսի արդյունավետ դատական համակարգ, որը հնարավորություն կտար պատասխանատվության ենթարկել իր դստեր մահվան համար պատասխանատու անձանց:

60. Կառավարությունը պնդել է, որ իշխանությունները կատարել են իրենց պոզիտիվ պարտավորությունը: Մասնավորապես, նշանակվել է դիահերձում եւ դատաբժշկական փորձաքննություն, ինչպես նաև ցուցմունք է տվել շտապօգնության բրիգադը, այդ թվում՝ շտապ բուժօգնության բժիշկը եւ բուժքույրը: Ավելին, այն բանից հետո, երբ Վարչական շրջանի դատախազությունը վերացրել է քննիչի՝ քրեական վարույթի հարուցումը մերժելու մասին 2008 թվականի փետրվարի 27-ի որոշումը, նշանակվել է լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն: Ձեռնարկված բոլոր միջոցառումների արդյունքում որեւէ պատճառահետեւանքային կապ չի հայտնաբերվել շտապօգնության բրիգադի գործողությունների եւ դիմումատուի դստեր մահվան միջեւ: Հաստատված քրեորեն պատժելի արարքի բացակայության պարագայում դիմումատուն ո՛չ քրեական գործով վարույթի շրջանակներում ներկայացված քաղաքացիական հայցի միջոցով, ո՛չ էլ քաղաքացիական գործով առանձին վարույթով փոխհատուցում ստանալու որեւէ հնարավորություն չէր ունենա: Կառավարությունը մատնանշել է այն փաստը, որ շտապօգնության բժիշկը նկատողություն է ստացել դիմումատուի դստերը ցուցաբերված բժշկական օգնության ժամանակ աշխատանքային կանոնակարգերը եւ բժշկական էթիկան լրջորեն խախտելու համար:

2. Դատարանի գնահատականը

61. Դատարանը կրկին նշում է, որ 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային պարտավորությամբ պետությունից պահանջվում է ստեղծել այնպիսի արդյունավետ անկախ դատական համակարգ, որ բացահայտվի բուժաշխատողների խնամքի տակ եղած հիվանդների մահվան պատճառը՝ թե՛ պետական եւ թե՛ մասնավոր հատվածում, եւ դրա համար պատասխանատու անձինք ենթարկվեն պատասխանատվության (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Կալվելին եւ Սիգլիոն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Calvelli and Ciglio v. Italy* [GC]], թիվ 32967/96, § 49, ՄԻԵԴ 2002-I եւ *Փոուելն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [*Powell v. the United Kingdom* (dec.)], թիվ 45305/99, ՄԻԵԴ 2000-V): Նշված ընթացակարգային պարտավորությունը վերաբերում է ոչ թե արդյունքին, այլ միայն միջոցներին (տե՛ս *Փոուլ եւ Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Paul and Audrey Edwards v. the United Kingdom*], թիվ 46477/99, § 71, ՄԻԵԴ 2002-II):

62. Եթե նույնիսկ Կոնվենցիայով որպես այդպիսին չի երաշխավորվում երրորդ կողմերի դեմ քրեական վարույթ հարուցելու իրավունքը, ապա Դատարանը մի շարք առիթներով նշել է, որ 2-րդ հոդվածով պահանջվող արդյունավետ դատական համակարգը կարող է ներառել, իսկ որոշ հանգամանքներում պետք է ներառի քրեական իրավունքի օգնությանը դիմելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, եթե կյանքի իրավունքի կամ անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտումը չի կատարվել դիտավորությամբ, ապա 2-րդ հոդվածով սահմանված՝ արդյունավետ դատական համակարգ ստեղծելու պոզիտիվ պարտավորությունը պարտադիր ձեւով չի ենթադրում յուրաքանչյուր գործի դեպքում քրեական իրավունքում առկա իրավական պաշտպանության միջոցի տրամադրում: Բժշկական անփութության կոնկրետ դեպքերում այդ պարտականությունը կարող է կատարվել, օրինակ, եթե դատական համակարգով տուժողներին հնարավորություն է տրվում օգտվելու քաղաքացիական գործերով դատարաններում առկա իրավական

պաշտպանության միջոցից՝ ինքնուրույն կամ քրեական գործերով դատարաններում առկա իրավական պաշտպանության միջոցի հետ համատեղ՝ տվյալ բժիշկների մասով պատասխանատվություն սահմանելու եւ քաղաքացիական գործով ցանկացած պատշաճ փոխհատուցում ստանալու հնարավորություն տալով, ինչպես օրինակ՝ վնասների վերաբերյալ հանձնարարությունը կամ որոշման հրապարակումը: Կարող են կիրառվել նաեւ կարգապահական միջոցներ (տե՛ս *Կալվելիի եւ Սիգլիոյի* գործը՝ վերելում հիշատակված, § 51, եւ *Զ-ն ընդդեմ Լեհաստանի* [*Z v. Poland*], թիվ 46132/08, § 94, 2012 թվականի նոյեմբերի 13):

63. Անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Դատարանը նկատում է, որ 2007 թվականի սեպտեմբերի 7-ի երեկոյան դիմումատուի դուստրը՝ Կ.Մ.-ն, որը մոտավորապես հինգ շաբաթական հղի է եղել, իրեն վատ է զգացել եւ սկսել է ցնցվել: Կանչվել է շտապօգնություն. նրան ախտորոշել են ցնցումային համախտանիշ, կատարել են երկու ներարկում եւ տեղափոխել են հիվանդանոց, որտեղ 2007 թվականի սեպտեմբերի 14-ին նա մահացել է: Նա այլեւս գիտակցության չի եկել: Դիմումատուն չի պնդել կամ ենթադրել, որ իր դուստրը հիվանդանոց տեղափոխվելուց հետո չի ստացել անհրաժեշտ բժշկական օգնություն: Այնուամենայնիվ, նա պնդել է, որ շտապօգնության բժիշկը եւ բուժքույրը իր դստերն առաջին օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել եւ, ավելին, ներարկել են այնպիսի նյութեր, որոնք հակացուցված են եղել՝ հաշվի առնելով նրա հղիությունը, շնչառական խնդիրները եւ արյան ցածր ճնշումը:

64. Դատարանն ի սկզբանե նշում է, որ, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, իր գործառույթների մեջ չի մտնում Կ.Մ.-ի վիճակի վերաբերյալ բժիշկների գնահատականի կամ նրա բուժման վերաբերյալ նրանց որոշումների, այդ թվում՝ այդ ժամանակ հանգուցյալի առողջական վիճակի հիման վրա դեղամիջոցների նրանց ընտրության մանրամասն քննությունը:

65. Այնուամենայնիվ, դիմումատուի դատեր մահվանը հանգեցնող իրադարձությունները եւ ներգրավված բուժանձնակազմի ենթադրյալ պատասխանատվությունը հարցեր են, որոնք պետք է ուսումնասիրվեն այդ իրադարձությունները պարզաբանելու համար նախատեսված մեխանիզմների համապատասխանության տեսանկյունից՝ հնարավորություն տալով, որպեսզի գործի փաստերը ենթարկվեն հանրային վերահսկողության, մասնավորապես, ի շահ դիմումատուի (տե՛ս, *Փոուելն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործը՝ վերելում հիշատակված): Հետեւաբար, Դատարանը պետք է ուսումնասիրի, թե արդյոք կարող է, համաձայն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, առաջանալ պետության պատասխանատվության հարցը՝ դատական համակարգի՝ դիմումատուի դատեր մահվանը հանգեցրած անփութության համար պատասխանատվություն սահմանելու ենթադրյալ անկարողության հետ կապված: Այն պետք է ուսումնասիրի, թե արդյոք կարելի է ասել, որ իրավական պաշտպանության հասանելի միջոցները միասին վերցված ապահովել են մեղավորներին պատասխանատվության ենթարկելու եւ տուժողին համապատասխան փոխհատուցում տրամադրելու համար բավարար փաստերը հաստատող իրավական միջոցների առկայությունը (տե՛ս *Դոդովն ընդդեմ Բուլղարիայի [Dodov v. Bulgaria]*, թիվ 59548/00, §§ 79-98, 2008 թվականի հունվարի 17, եւ *Բիրժիկովսկին ընդդեմ Լեհաստանի [Byrzykowski v. Poland]*, թիվ 11562/05, §§ 104-118, 2006 թվականի հունիսի 27):

66. Դատարանն ի սկզբանե նշում է, որ դիմումատուի դատեր մահվան առնչությամբ, որպես այդպիսին, որեւէ քրեական վարույթ չի հարուցվել, սակայն Կ.Մ.-ի մահվան օրը Վարչական շրջանի դատախազությունը նրա մահվան առնչությամբ հետաքննություն է սկսել, որի ընթացքում նշանակվել է դիահերձում, ինչպես նաեւ հարցաքննվել է Կ.Մ.-ի բուժման գործընթացին ներգրավված բուժանձնակազմը: Այս առնչությամբ Դատարանը նկատում է, որ պաշտոնապես հարուցված քրեական վարույթի բացակայության պայմաններում, հարցաքննված անձանց, այդ թվում՝ շտապօգնության բժշկին եւ բուժքրոջը պարզապես խնդրել են

իրադարձությունների վերաբերյալ բացատրություն տալ: Ավելին, չնայած շտապօգնության բժշկի եւ բուժքրոջ կողմից տրված՝ իրադարձությունների վերաբերյալ բացատրությունները՝ ներարկված դեղամիջոցների տեսակի եւ քանակի մասով, հակասել են միմյանց, քննիչը որեւէ լուրջ քայլ չի ձեռնարկել նրանց սկզբնական ցուցմունքների միջեւ անհամապատասխանությունները պարզաբանելու համար (տե՛ս վերելում՝ 12-րդ եւ 13-րդ պարբերությունները): Դատարանն այնուհետեւ նկատում է, որ քննության ընթացքում հարցաքննված բուժաշխատողներից ոչ մեկը հետագայում չի կանչվել դատարանում երդմամբ ցուցմունք տալու համար՝ չնայած դիմումատուն այդպիսի հատուկ պահանջ էր ներկայացրել, ինչը կարող էր հնարավորություն տալ ստուգելու նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Հարկ է նշել, որ թե՛ քննություն իրականացնող մարմինները եւ թե՛ դատարաններն իրենց որոշումները կայացնելիս հիմնվել են բուժանձնակազմի անդամների վերոնշյալ ցուցմունքների վրա (տե՛ս վերելում՝ 20-րդ եւ 26-րդ պարբերությունները):

67. Դատարանը նաեւ նշում է, որ քննություն իրականացնող մարմինը հետաքննության ժամանակ չի ապահովել դիմումատուի անմիջական մասնակցությունը: Քանի որ չի հարուցվել քրեական վարույթ, դիմումատուն վարույթում չի ունեցել տուժողի պաշտոնական կարգավիճակ, որը նրան թույլ կտար օգտվելու այդ կարգավիճակին հատուկ իրավունքներից, ինչպես օրինակ՝ գործի նյութերում ներառելու համար փաստաթղթեր կամ այլ նյութեր ներկայացնելը կամ փորձագետներին հարցեր ուղղելը: Փաստացի, դիմումատուն քննությունն իրականացնող մարմին մի քանի անգամ ներկայացրել է համապատասխան բժշկական ցուցումների պատճեններն ու բժշկական գրականությունից քաղվածքներ եւ հետագայում դատարանում հղում է կատարել դրանց, սակայն նրա փաստարկներն այդպես էլ չեն ուսումնասիրվել: Ավելին, չնայած այն փաստին, որ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննությանը դիմումատուի մասնակցությունն ի վերջո թույլատրվել է Վարչական շրջանի դատախազի 2008 թվականի մարտի 3-ի որոշմամբ, պարզվում է, որ նրա

մասնակցությունը զուտ ձեական բնույթ է կրել, քանի որ համապատասխան փաստաթղթային ապացույցներով հիմնավորված նրա փաստարկները չեն ուսումնասիրվել փորձագետների հանձնաժողովի կողմից՝ իր եզրահանգումներն անելու ժամանակ (տե՛ս վերելում՝ 16-րդ և 22-րդ պարբերությունները): Հետեւաբար, չի կարելի համարել, որ դիմումատուն՝ հաշվի առնելով նրա անմիջական հետաքրքրվածությունը և անձնական մտահոգությունը հետաքննության առարկայի նկատմամբ, գործընթացին ներգրավված է եղել այնքանով, որքանով անհրաժեշտ է եղել նրա շահերը պաշտպանելու համար:

68. Դատարանն այնուհետև նշում է, որ ո՛չ դիախերձմամբ և ո՛չ էլ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննությամբ վերջնականապես չի պարզվել դիմումատուի դստեր մահվան պատճառը: Այսպիսով, համաձայն դիախերձման արձանագրության, նա մահացել է օրգանիզմի ընդհանուր թունավորումից, որն առաջացել է նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի հետեւանքով առաջացած գլխուղեղի կենսական կարելոր ֆունկցիաների խանգարման հետեւանքով: Նշանակվել է երկու լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն. մեկը նախաքննության ընթացքում, որի արդյունքում կայացվել է թիվ 89 դատաբժշկական եզրակացությունը, և մյուսը՝ դատախազի 2008 թվականի մարտի 3-ի որոշման համաձայն իրականացված լրացուցիչ քննության ընթացքում, որի արդյունքում կայացվել է թիվ 6 դատաբժշկական եզրակացությունը: Չնայած պատասխանող Կառավարությունը Դատարանին չի տրամադրել թիվ 89 դատաբժշկական եզրակացության ամբողջական և ճշգրիտ օրինակը, ըստ հասանելի նյութերի՝ այս եզրակացության մեջ նշվել է, որ Կ.Մ.-ին ցուցաբերված բժշկական օգնությունը եղել է ճիշտ և ավստանիշների վրա հիմնված: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք այս դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է օրգանիզմի ընդհանուր թունավորման պատճառը, որն առաջացել է նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի հետեւանքով առաջացած գլխուղեղի կենսական կարելոր ֆունկցիաների խանգարման հետեւանքով, որը ենթադրաբար Կ.Մ.-ի մահվան պատճառն է եղել:

Ավելին, թիվ 6 դատաբժշկական եզրակացությամբ նույնպես հստակ չի պարզվել, թե կոնկրետ ինչի հետեւանքով է առաջացել Կ.Մ.-ի նյարդային անոթների թրոմբոզը, որը հանգեցրել է գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների խանգարման, ինչի հետեւանքով էլ տեղի է ունեցել օրգանիզմի ընդհանուր թունավորումը: Միեւնույն ժամանակ, այս եզրակացության մեջ նշվել է, որ պարզ չէ, թե արդյոք Կ.Մ.-ն ծնված օրվանից տառապել է այնպիսի հիվանդությամբ, որը հավանաբար կարող էր կապ ունենալ նրա մահվան հետ, եւ որ համապատասխան բժշկական փաստաթղթերի բացակայության պայմաններում հնարավոր չի եղել պարզել, թե արդյոք նա ունեցել է որեւէ ֆունկցիոնալ խանգարում, որը կարող էր առաջացնել ցնցումային համախտանիշը (տե՛ս վերելում՝ 19-րդ պարբերությունը): Այս առնչությամբ Դատարանը նկատում է, որ քննություն իրականացնող մարմինը եւ դատարանները որեւէ փորձ չեն արել հանգուցյալի՝ նրա մահվանը հանգեցրած կրիտիկական վիճակի պատճառները պարզելու համար եւ, առանց լրացուցիչ պարզաբանման, բավարար են համարել դատաբժշկական փորձագետների եզրահանգումներին հղում կատարելը, որոնցով, ինչպես արդեն նշվել է, պարզապես հաստատվել է մահվան՝ դիախեթմամբ որոշված հնարավոր պատճառը, սակայն չի տրվել որեւէ բացատրություն, թե նախ եւ առաջ այդ վիճակն ինչի հետեւանքով կարող էր առաջանալ: Այնուհետեւ Դատարանը նկատում է, որ դիմումատուն եւ հանգուցյալի մյուս բարեկամները ո՛չ հետաքննության եւ ո՛չ էլ դատական վարույթի ընթացքում չեն հարցաքննվել՝ պարզելու համար, թե արդյոք նախկինում նա ունեցել է որեւէ այնպիսի խանգարում, որը կարող էր հանգեցնել նյարդային անոթների տարածուն եւ ցրված թրոմբոզի: Այդպիսի հանգամանքներում Դատարանը գտնում է, որ իշխանությունները չեն գործել բավարար ջանասիրությամբ եւ խնամքով, որպեսզի պարզեն դիմումատուի դստեր մահվան պատճառը:

69. Ի վերջո, Դատարանը նշում է, որ հետաքննությամբ պարզվել է, որ շտապօգնության բրիգադը դիմումատուի դստերը պատշաճ բժշկական օգնություն չի ցուցաբերել: Հետեւաբար, զարմանալի է այն փաստը, թե ինչու դրա մասին

ընդհանրապես չի նշվել կամ այն հաշվի չի առնվել քրեական վարույթ հարուցելը մերժելու մասին քննիչի որոշման մեջ: Ավելին, այս որոշման մեջ, որը հետագայում հաստատվել է դատարանների կողմից, նշվել է, որ Կ.Մ.-ին առաջին բժշկական օգնությունը տրամադրվել է պատշաճ ձեռով, մինչդեռ, միեւնույն ժամանակ, բժիշկն իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար քննիչի պահանջով ստացել է նկատողություն: Այդպիսի հանգամանքներում պարզ է դառնում, որ քննություն իրականացնող մարմինը դիմումատուի դստերը ցուցաբերված բժշկական օգնության պատշաճ լինելու վերաբերյալ հանգել է ոչ ճիշտ եզրահանգումների, եւ որ դատարանները պարզապես հաստատել են այդ եզրահանգումները՝ առանց լրացուցիչ ուսումնասիրելու, թե արդյոք շտապօգնության բրիգադի՝ իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելը հանգուցյալի վիճակի վրա որեւէ որոշիչ բացասական ազդեցություն է ունեցել (տե՛ս վերելում՝ 20-րդ, 21-րդ, 23-րդ եւ 24-րդ պարբերությունները):

70. Այսպիսի հանգամանքներում Դատարանը համարում է, որ քրեական իրավունքում առկա իրավական պաշտպանության միջոցով հնարավոր չէր լինի պարզել դիմումատուի դստեր մահվան պատճառը եւ պատասխանատվության ենթարկել պատասխանատու անձանց: Հետեւաբար, Դատարանը պետք է ուսումնասիրի, թե արդյոք պատասխանող պետությունն ապահովել է Կոնվենցիայի համապատասխան պահանջները բավարարող իրավական պաշտպանության այլ միջոցների հասանելիությունը:

71. Դատարանը նշում է, որ Ա.Գ.-ն Շտապ բժշկական օգնության ծառայության ղեկավարության կողմից ստացել է նկատողություն՝ որպես շտապօգնության բժիշկ իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ Ա.Գ.-ի նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցը կապված է եղել ներքին աշխատանքային կանոնակարգերը եւ բժշկական էթիկան խախտելու հետ եւ դրանով, որպես այդպիսին, ենթադրյալ բժշկական անփութության համար նրա

պատասխանատվությունը չի հաստատվել: Այդուհանդերձ, պարզ չէ եւ Կառավարության կողմից նույնպես չի վիճարկվել այն, որ Ա.Գ.-ի նկատմամբ նրա գործատուի, այլ ոչ թե բժշկական անփութության հետ կապված դեպքերը քննելու համապատասխան լիազորություն ունեցող մասնագիտական մարմնի կողմից կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելով, դիմումատուին տրամադրվել է բավարար փոխհատուցում՝ նրան տալով իր դստեր կորստի համար ցանկացած տեսակի հատուցում պահանջելու իրավունք:

72. Դատարանը նկատում է, որ տվյալ ժամանակահատվածում դիմումատուն հնարավորություն չի ունեցել պետության դեմ քաղաքացիական հայց ներկայացնելու՝ իր դստեր մահվան հետեւանքով կրած ոչ նյութական վնասի հատուցման պահանջով, քանի որ նյութական վնասը չի համարվել վնասի այնպիսի տեսակ, որի դիմաց կարող էր հատուցում պահանջվել քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում (տե՛ս վերելում՝ 39-րդ եւ 42-րդ պարբերությունները)՝ մինչեւ Քաղաքացիական օրենսգրքում 2014 թվականին կատարված փոփոխությունները: Ինչ վերաբերում է նյութական վնասի հատուցում պահանջելու հնարավորությանը, ապա Կառավարությունը պնդել է, որ այդ հնարավորությունը կախված է քրեական գործով վարույթի արդյունքից (տե՛ս վերելում՝ 60-րդ պարբերությունը):

73. Այս առնչությամբ Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթները համարվող 2-րդ եւ 3-րդ հոդվածների խախտում պարունակող գործերում խախտման հետեւանքով առաջացած ոչ նյութական վնասի հատուցումը պետք է, մասնավորապես, հասանելի լինի՝ որպես փոխհատուցման շրջանակի մի մաս (տե՛ս, *Փոուլ եւ Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 46477/99, § 97, ՄԻԵԴ 2002-II եւ *Զ-ն եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Z and Others v. the United Kingdom* [GC]], թիվ 29392/95, § 109, ՄԻԵԴ 2001-V):

74. Այն հանգամանքներում, երբ դիմումատուն ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու որեւէ հնարավորություն չի ունեցել, մինչդեռ նյութական

վնասի դիմաց հատուցում ստանալու հնարավորությունը, ինչպես պնդել է Կառավարությունը, կախված է եղել քրեական վարույթի արդյունքներից (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Բիրժկովսկու* գործը՝ վերելում հիշատակված, §§ 112-116), Դատարանը համարում է, որ պաշտպանության քաղաքացիաիրավական միջոցներով հնարավոր չէր լինի հասնել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված արդյունքին, այն է՝ պարզել դիմումատուի դատեր մահվան հետ կապված հանգամանքները եւ պատասխանատու անձանց ենթարկել պատասխանատվության:

75. Հետեւաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային պարտավորության խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

76. Դիմումատուն հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ, 7-րդ, 13-րդ եւ 17-րդ հոդվածների վրա՝ բողոք ներկայացնելու համար, որ ինքը զրկվել է Վճռաբեկ դատարանի մատչելիությունից, քանի որ իր վճռաբեկ բողոքը մերժվել է այն հիմքով, որ այն չի ներկայացվել Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի կողմից, որի ծառայություններից օգտվելու հնարավորություն ինքը չի ունեցել:

77. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը, եւ այնքանով, որքանով նշված բողոքների քննությունն իր իրավասության սահմաններում է, գտնում է, որ դրանք չեն պարունակում Կոնվենցիայով կամ դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Հետեւաբար, գանգատի այդ մասը պետք է մերժվի՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

78. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

79. Դիմումատուն պահանջել է 8 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ ներառյալ հուղարկավորության ծառայությունների եւ գերեզմանաքարի տեղադրման հետ կապված ծախսերը: Նա նաեւ պահանջել է 15 000-20 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, որն ինքը եւ իր կինը կրել են իրենց դստեր կորստի հետեւանքով:

80. Կառավարությունը վիճարկել է, որ որպես նյութական վնասի դիմաց պահանջվող գումարը որեւէ ապացույցով չի հիմնավորվել, իսկ որպես ոչ նյութական վնասի հատուցում պահանջվող գումարը չափազանց մեծ է: Կառավարությունն այնուհետեւ նշել է, որ դիմումատուն պահանջել է նաեւ իր կնոջ կողմից ենթադրաբար կրած ոչ նյութական վնասի հատուցում, ով Դատարանում վարույթի կողմ չի եղել:

81. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ. ուստի, այն մերժում է այս պահանջը: Մյուս կողմից, արդարացիության սկզբունքի հիման վրա որոշում կայացնելով, Դատարանը դիմումատուին շնորհում է 12 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

82. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի մասով պահանջ չի ներկայացրել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

83. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Հայտարարում է, մեծամասնության կողմից, դիմումատուի՝ իր դստեր մահվան առնչությամբ արդյունավետ քննություն չիրականացնելու վերաբերյալ բողոքն ընդունելի.
2. Միաձայն հայտարարում է գանգատի մնացած մասն անընդունելի.
3. Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում.
4. Ձայների՝ վեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ, վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալու օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, պետք է դիմումատուին վճարի 12 000 եվրո (տասներկու հազար եվրո)՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, որը պետք է փոխարկվի Հայաստանի Հանրապետության դրամով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Միաձայն *մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2017 թվականի նոյեմբերի 16-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս

Քարտուղար

Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ սույն վճռին կից ներկայացվում է դատավորներ Վոյտիչեկի եւ Այքըրի առանձին կարծիքը:

Լ.-Ա.Ս.

Ա.Կ.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՎՈՅՏԻՉԵԿԻ ԵՎ ԱՅՔԸԻ՝
ՄԱՍԱՄԲ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Ներկայիս գործում մենք համաձայնում ենք մեծամասնության հետ այն մասով, որ պատասխանող պետությունը չի կատարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված իր ընթացակարգային պարտավորությունները. այդուհանդերձ, մենք չենք կիսում այն կարծիքը, որ գանգատն ընդունելի է:

2. Կարծում ենք, որ հակասություն կա իրավական պաշտպանության միջոցները սպառելու հետ կապված պատճառաբանությունների մեջ: Մի կողմից, 55-րդ պարբերության մեջ՝ որպես եզրահանգում, մեծամասնության կողմից նշվում է հետևյալը. «Այսպիսով, պարզ է դառնում, որ Վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոք ներկայացնելը տվյալ ժամանակահատվածում իրավական պաշտպանության մատչելի միջոց չի եղել:» Մյուս կողմից, 56-րդ պարբերության մեջ մեծամասնության կողմից նշվում է հետևյալը. «Թվում է, թե Վճռաբեկ դատարանն այս կանոնը [որը դատարաններին թույլ է տալիս կասեցնել վարույթը, եթե դրանք գտնում են, որ կիրառվող դրույթը չի համապատասխանում Սահմանադրությանը] չկիրառելով եւ փոխարենը դիմումատուի վճռաբեկ բողոքի քննությունը մերժելու որոշում կայացնելով, ցուցաբերել է ավելորդ ձեւականություն»: Երկրորդ ենթադրությամբ անհրաժեշտորեն ենթադրվում է, որ իրավական պաշտպանության միջոցը չի եղել ոչ արդյունավետ եւ պատշաճորեն կիրառվելու դեպքում այն կլիներ արդյունավետ:

3. Եթե առաջին ենթադրությունը ճիշտ է, եւ գանգատը ներկայացնելու ժամանակահատվածում վճռաբեկ բողոքը իրավական պաշտպանության մատչելի միջոց չի եղել (ինչպես, մեծամասնության կարծիքով, Դատարանը եզրակացրել է *Շամոյանն ընդդեմ Հայաստանի* գործում, թիվ 18499/08, § 33, 2015 թվականի հուլիսի 7), ապա դիմումատուն չպետք է պահանջեր իրավական պաշտպանության ոչ արդյունավետ միջոց (տե՛ս, օրինակ, *Գլինսկին ընդդեմ Լեհաստանի* [*Glinski v. Poland*], թիվ 21062/05, եւ *Ֆերնին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Fernie v. the United Kingdom*], թիվ 14881/04 գործերով՝

անընդունելիության վերաբերյալ որոշումները): Արդյունքում, Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատ ներկայացնելու վերջնաժամկետը հաշվարկվում է այն օրվանից սկսած, երբ դիմումատուին հանձնվում է Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը:

2008 թվականի սեպտեմբերի 4-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը, եւ 2008 թվականի սեպտեմբերի 30-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան: Ենթադրելով, որ Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը դիմումատուին հանձնվել է ամենաուշը սեպտեմբերի 30-ին, դիմումատուն գանգատը պետք է ներկայացնէր ամենաուշը 2009 թվականի մարտի 30-ին: Հետեւաբար, քանի որ գանգատը չի ներկայացվել մինչեւ 2009 թվականի ապրիլի 22-ը, այն պետք է ժամկետը բաց թողնելու հիմքով հայտարարվեր անընդունելի:

4. Դրան հակառակ՝ եթե երկրորդ ենթադրությունը ճիշտ է, եւ Վճռաբեկ դատարանը կարող էր քննել վճռաբեկ բողոքը՝ անկախ այն փաստից, որ այն չէր ներկայացվել հավատարմագրված փաստաբանի կողմից, ապա մենք կարծում ենք, որ առկա ապացույցներով դիմումատուն արդյունավետորեն չի սպառել իրավական պաշտպանության այդ միջոցը: Ի վերջո, անկախ վերոնշյալ կանոնի առկայությունից, որը հաստատվել է Սահմանադրական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ, որի համաձայն՝ Քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը եւ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածը հակասում են Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին, այն մասով, որ դրանք անհամաչափորեն սահմանափակել են Վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը (տե՛ս սույն վճռի 49-րդ պարբերությունը), պարզ է դառնում, որ դիմումատուն, հաշվի առնելով Սահմանադրության հետ մասնակի անհամապատասխանությունը, ոչ միայն չի դիմել Վճռաբեկ դատարան իր գործով վարույթը կասեցնելու համար այնքան ժամանակ, մինչեւ անհամապատասխանությունը վերացվելը կամ Սահմանադրական դատարանի

կողմից սահմանված վերջնաժամկետը (2008 թվականի դեկտեմբերի 31) լրանալը, այլ նաեւ, ընդհանուր առմամբ, չի դիմել Վճռաբեկ դատարան՝ իր ֆինանսական դրությունը հաշվի առնելու համար: Այս համատեքստում մենք նշում ենք, որ Վճռաբեկ դատարանը դիմումատուի գործով որոշում չի կայացրել մինչեւ 2008 թվականի հոկտեմբերի 30-ը, այսինքն՝ Սահմանադրական դատարանի որոշումից երեք շաբաթ հետո եւ Սահմանադրական դատարանի կողմից սահմանված վերջնաժամկետը լրանալուց երկու ամիս առաջ:

5. Ամեն դեպքում, տվյալ իրավական պաշտպանության (առկայության դեպքում) անարդյունավետությունը, ինչպես սահմանվել է մեծամասնության կողմից, եղել է հարաբերական, այլ ոչ թե բացարձակ՝ հաշվի առնելով այն փաստը, որ դրա մատչելիությունը կախված է եղել դիմումատուի՝ հավատարմագրված փաստաբանի կողմից պահանջվող ծախսերը կրելու հնարավորությունից: Դիմումատուն պնդում է, որ ինքը ի վիճակի չի եղել վճարելու այն գումարը, որը հավանաբար կպահանջեր հավատարմագրված փաստաբանը: Այս փաստարկը մեզ համար շատ կարեւոր է: Դատարանի մատչելիությունը երբեւէ չպետք է խոչընդոտվի չափազանց մեծ ֆինանսական բեռով, եւ ցանկացած այդպիսի պնդում արժանի է Դատարանի պատշաճ ուշադրությանը:

Ներկայիս գործում, այնուամենայնիվ, դիմումատուի պնդումն այն մասին, որ իր վրա չափազանց մեծ ֆինանսական բեռ է դրվել, բավարար ձեւով չի հիմնավորվել: Այս առնչությամբ, պատճառաբանումը շարունակում է մնալ ոչ համոզիչ, քանի որ պարզ է, որ մեծամասնությունն ընդունել է դիմումատուի՝ փաստաբանի ծառայությունների հետ կապված ծախսերի դիմաց վճարելու հնարավորություն չունենալու վերաբերյալ պնդումները՝ չփորձելով գնահատել նրա իրական վիճակը: Ի վերջո, մենք որեւէ տեղեկություն չունենք ո՛չ դիմումատուի ֆինանսական վիճակի եւ ո՛չ էլ այն ծախսերի վերաբերյալ, որոնք նա կկրեր՝ իր վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարան ներկայացնելու համար: Ավելին, չկա որեւէ ապացույց՝ բացի ակնհայտ հստակ օրենսդրական պահանջից,

որ դիմումատուն երբեւէ դիմել է հավատարմագրված փաստաբանի՝ նման բողոք ներկայացնելու հնարավոր ծախսերի վերաբերյալ հետաքրքրվելու համար:

6. Ինչ վերաբերում է փոխհատուցման հարցին, ապա դատավոր Վոյտիչեկը դեմ է քվեարկել դիմումատուին ոչ նյութական վնասի դիմաց 14 000 եվրոյի չափով գումար շնորհելուն: Հաշվի առնելով նմանատիպ գործերով շնորհված փոխհատուցման չափը՝ նա գտել է, որ դիմումատուին շնորհված գումարը չափազանց մեծ է: Դատավոր Այքըն այս հարցի շուրջ համաձայնել է մեծամասնության հետ: